ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«20» 10 2022 թ.
No 006970

«ՎԱԼԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 23, բն. 68)

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 18-ի ««Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 403-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք նաև, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «8» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչություն
Կատարող՝ Տաթևիկ Հովհաննիսյան, հեռ. (+374 60) 830-840 (235)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 23 նոյեմբերի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 403-Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), 2022 թվականի հոկտեմբերի 18-ի նիստում, քննարկելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ **«Վեոլիա Ջուր» ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Հաղորդման հակիրճ բովանդակությունը.</u>

«Վալարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Վալարմ» ընկերություն**) կողմից 2022 թվականի սեպտեմբերի 20-ին Հանձնաժողով է ներկայացվել տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**):

Հաղորդման շրջանակներում «Վալարմ» ընկերությունը հայտնել է, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հոլոգրաֆիկ կնիքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎՋ-ՄԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Վալարմ» ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից: Այնուհետև՝ «Վալարմ» ընկերությունը գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարից ստացել է ծանուցում կնիքների նմուշները գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովին ներկայացնելու վերաբերյալ, ինչի արդյունքում «Վեոլիա Ջուր» ընկերության մասնագետները վերոնշյալ նմուշները գնահատել են հրավերի պահանջներին անհամապատասխան: Արդյունքում՝ գնման ընթացակարգի շրջանակում պայմանագիր է շնորհվել երկրորդ տեղ զբաղեցրած «Մեդարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ **«Մեդարտ» ընկերություն**):

«Վալարմ» ընկերությունը նշել է նաև, որ երեք տարի շարունակ մասնակցել է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից կնիքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերին, սակայն գնման ընթացակարգերի ամփոփման արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Մեդարտ» ընկերությունը: Ընդ որում, նշված ժամանակահատվածում հայտարարված երեք գնման ընթացակարգերից երկուսի դեպքում «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկն եղել է ամենացածրը:

Բացի այդ, «Վալարմ» ընկերությունը ընդգծել է, որ «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից կնիքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերը համընկնում են բացառապես «Մեդարտ» ընկերության կողմից ներկայացվող կնիքների հետ, ինչի արդյունքում գնման ընթացակարգերի հնարավոր այլ մասնակիցների համար ստեղծվում են վերջիններիս մասնակցելու խոչընդոտներ:

Ելնելով վերոգրյալից, «Վալարմ» ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին հարուցել տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման վերաբերյալ վարույթ:

2. <u>Ապրանքային շուկա սահմանելու հարցի կապակցությամբ.</u>

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկան որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, ուսումնասիրության ժամանակահատվածով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի իմաստով՝ տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե, որպես իրացնող կամ ձեռք բերող, չունի մրցակից:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի «Տնտեսավարող սուբյեկտի մենաշնորհ և գերիշխող դիրքի որոշման մեթոդաբանությունը և կարգը սահմանելու մասին և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 194-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 264-Ն որոշման հավելվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մրցակից չունեցող է համարվում այն տնտեսավարող սուբյեկտը, որը գործում է բացառիկ կամ փաստացի միակ լիցենզիայի, թույլտվության կամ իրավունքի հիման վրա, որի դեպքում անհրաժեշտություն չի առաջանում իրականացնելու սույն կարգում նշված ուսումնասիրությունը կամ տեղեկատվության վերլուծությունը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» ընկերությանը տրվել է թիվ ԼՋ-0001 խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների

մատուցման լիցենզիան (այսուհետ նաև՝ **Լիցենզիա**), համաձայն որի՝ «Վեոլիա Ջուր» ընկերությանը իրավունք է տրվել և պարտավորեցվել է մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը «Վեոլիա Ջուր» ընկերության տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված ջրային համակարգերով և դրանց առնչվող այլ գույքով մատուցել խմելու ջրի մատակարարման ծառայություններ Հայաստանի Հանրապետության՝ ծառայությունների մատուցման Լիցենզիայով սահմանված տարածքներում:

Այսպիսով «Վեոլիա Ջուր» ընկերությունը «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում» ապրանքային շուկայում ունի մենաշնորհի դիրք՝ վերջինիս տրված Լիցենզիայի ուժով:

Միևնույն ժամանակ, «Վեոլիա Ջուր» ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ջրաչափերի նկատմամբ հիմնական պահանջարկ ներկայացնող տնտեսավարող սուբյեկտը և իր գործառույթների շրջանակներում ունի ջրաչափերի աշխատանքը ապահովելու պարտավորություն, ինչից էլ բխում է վերջինիս կողմից հոլոգրաֆիկ կնիքների ձեռքբերման անհրաժեշտությունը, քանի որ դրանց առկայությունը անմիջականորեն ազդում է փաստացի սպառվող ջրի ծավալների հաշվարկի և դրա արդյունքում սպառողներից գանձման ենթակա գումարների որոշման վրա:

Ելնելով վերոգրյալից, սույն գործի շրջանակներում Հանձնաժողովի կողմից դիտարկվող ապրանքային շուկան է «Հոլոգրաֆիկ կնիքների ձեռքբերում» ապրանքային շուկան (այսուհետ նաև՝ **Ապրանքային շուկա**):

Այսպես՝ Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանն է հոլոգրաֆիկ կնիքների ձեռքբերումը, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Միևնույն ժամանակ, Ապրանքային շուկայի, դրա սուբյեկտների կազմի և ծավալի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրության ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է հաշվի առնելով՝

- «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ջրաչափերի աշխատանքը ապահովելու նպատակով ձեռքբերվող հոլոգրաֆիկ կնքիների ծավալը և արժեքը, որպիսի պայմաններում Հաղորդմամբ նկարագրված վարքագիծն ու գործողությունները ունեն նվազ կարևորություն:
- «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում բարձրացված հարցերի բովանդակությամբ պայմանավորված դրանց բողոքարկման բավարար երաշխիքների առկայությունը:

Սույն ուսումնասիրության շրջանակներում Ապրանքային շուկայի դիտարկման ժամանակատվածն է «ՎՋ-ՄԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարման և ամփոփման ժամանակահատվածը, մասնավորապես՝ 2022 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածը:

3. <u>Իրավախախտման դեպքի առկայության հարցի կապակցությամբ.</u>

Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ ՄՊՀ-006113 գրությամբ «Վեոլիա Ջուր» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել՝

1. «Վեոլիա ջուր» ընկերության կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվող գնումների գործընթացի կազմակերպման կարգը.

2. «Վեոլիա ջուր» ընկերության կարիքների համար հայտարարված «ՎՋ-ՄԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող բոլոր փաստաթղթերի (մրցույթի մասին հայտարարություն և հրավեր, հայտեր, արձանագրություններ, ներքին գրություններ, զեկուցագրեր, հրամաններ, հանձնման-ընդունման արձանագրություններ, ակտեր և այլն) պատճենները:

«Վեոլիա ջուր» ընկերությունը 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՄԾ/32215 գրությամբ Հանձնաժողով ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, ինչպես նաև հայտնել է, որ հոլոգրաֆիկ կնիքները հանդիսանում են «Վեոլիա ջուր» ընկերության համար ռազմավարական նշանակություն ունեցող գործիքներ, քանի որ դրանց պատշաճ առկայության դեպքում են արձանագրվում ջրի ծախսերը և գանձման ենթակա գումարները: «Վեոլիա ջուր» ընկերությունը նշել է նաև, որ կարևորություն տալով հաշվիչ սարքերի անխափան աշխատանքին՝ կնիքների ձեռքբերման գնման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմելիս ուսումնասիրում է նմանատիպ կնիքների տեսականին, ինչպես նաև հավելել է, որ գնման ընթացակագերի շրջանակներում հնարավոր մասնակիցների կողմից չեն ներկայացվում կնիքների ժամանակակից տեսակներ, փոխարենը՝ մասնակիցների շրջանակը չի փոփոխվում և վերջիններիս կողմից ներկայացվում են կնիքների նույն մոդելները:

«Վեոլիա ջուր» ընկերությունը հայտնել է, որ «ՎՋ-ՄԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում առաջին հերթին գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է առաջին տեղ զբաղեցրած «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված նմուշը, որը ներկայացրել էր 3 300 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ: Գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից պատասխանատու ստորաբաժանման կարծիքի հիման վրա «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված նմուշը գնահատվել է անհամապատասխան և այնուհետև ուսումնասիրվել է երկրորդ տեղ զբաղեցրած «Մեդարտ» ընկերության կողմից ներկայացված նմուշը: Արդյունքում՝ «Մեդարտ» ընկերության կողմից ներկայացված նմուշը գնահատվել է բավարար և վերջինիս շնորհվել է պայմանագիր: Ընդ որում, «Մեդարտ» ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 3 600 000 ՀՀ դրամ: «Վեոլիա ջուր» ընկերությունը հավելել է նաև, որ «Մեդարտ» ընկերության կողմից ներկայացված տեսականին կիրառվում է ավելի քան երեք տարի, և չի արձանագրվել որևէ դեպք, երբ կատարվել է ջրաչափի աշխատանքի արտաքին միջամտություն:

«Վեոլիա ջուր» ընկերությունը նշել է, որ «Վալարմ» ընկերության կողմից ներկայացվել է դիմում, որով վերջինս խնդրել է վերանայել ընկերության կողմից ներկայացված հայտի մերժման որոշումը: Արդյունքում՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ևս մեկ անգամ դիմել է պատասխանատու ստորաբաժանման կարծիք ստանալու նպատակով: Պատասխանատու ստորաբաժանումը հայտնել է, որ ևս մեկ անգամ ուսումնասիրվել են «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված նմուշները և ներկայացվել են հետևյալ պարզաբանումները.

1. Կնիքի միջուկը բաց վիճակում ֆիքսված չէ, ինչը բարդություն է առաջացնում կնքելիս, մասնավորապես, երբ միջուկը խախտվում է, կնիքի լարը հնարավոր չէ անցկացնել նախատեսված անցքերով:

2. Կնիքի ներքին հատվածում դաջված համարանիշը և պարբերանշանը մաքրվում են:

3. Կնիքը կնքվում է միայն երկու անցքի և ձկան թելի միջոցով և չունի հավելյալ անցքեր առավել ապահով փակման համար:

4. Կնիքը փակվում է մեկ սեղմումով, սակայն անհրաժեշտ է կրկնակի փական:

5. Ներկայացված նմուշի միջուկն ունի ավելորդ անցք:

6. Կնիքի անցքերը զուգահեռ չեն, ինչը կնքելիս առաջացնում է անհարմարավետություն:

Այսպես, ևս մեկ անգամ «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված նմուշը դիտարկելուց հետո, «Վալարմ» ընկերության հայտը գնահատվել է անհամապատասխան գնման ընթացակարգի պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը «Վեոլիա ջուր» ընկերությունը նշել է, որ վերոնշյալ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Վեոլիա ջուր» ընկերության Գնումների կազմակերպան կարգին համապատասխան՝ հնարավոր մասնակիցների համար պահպանելով հավասար մրցակցային պայմաններ:

Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ ՄՊՀ-006121 գրությամբ Հանձնաժողովը դիմել է Հանրային ծառայությունները կարգավորող հաձնաժողովին՝ «Գնումների մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «Վեոլիա Ջուր» ընկերությունում 2020 և 2021 թվականներին, ինչպես նաև առկայության դեպքում 2022 թվականին (ըստ եռամսյակների) իրականացված դիտարկումների (մոնիտորինգի) արդյունքները Հանձնաժողովին տրամադրելու նպատակով:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԳԲ/34.3-Մ4-3/3503-2022 գրությամբ հայտնել է, որ սահմանել է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից մանրածախ և մեծածախ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման բազիսային սակագներ տասնհինգ տարվա համար, որոնք մանրածախ ջրամատակարարման ծավալի, սղաճի և ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների փոփոխություններով պայմանավորված յուրաքանչյուր տարի ենթարկվում են փոփոխության:

Միևնույն ժամանակ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը նշել է, որ «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից իրականացվող գնումներն ազդեցություն չունեն ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների վրա: Այսպես, «Վեոլիա Ջուր» ընկերությունը ներառված չէ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի № 273-Ա որոշմամբ հաստատված՝ գնումների կարգերի նկատմամբ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկում, ուստի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվող գնումների կարգավորում չի իրականացնում:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից մենաշնորհ կամ գերիշխող դիրքի (այսուհետ՝ գերիշխող դիրք) չարաշահումը:

Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ, 10-րդ և 16-րդ կետերի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը կամ կիրառումը, որի հետևանքով ստեղծվում են կամ կարող են ստեղծվել խտրական պայմաններ.

5) այլ տնտեսավարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների (այդ թվում՝ գների) սահմանումը կամ կիրառումն այլ հավասար պայմաններում.

10) այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել խտրական պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսավարող սուբյեկտներին.

16) այլ պայմանների կամ վարքագծի սահմանումը կամ կիրառումը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

Վկայակոչված կարգավորումից հետևում է, որ օրենսդիրը, շուկայական տնտեսության պայմաններում մրցակցության ազատության երաշխավորման անհրաժեշտությունից ելնելով, արգելել է գերիշխող դիրքի չարաշահումը:

Տվյալ դեպքում քննարկվում է «ՎՋ-ՄԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Վեոլիա Ջուր» ընկերության գործողություններում գերիշխող դիրքի չարաշահման հատկանիշների առկայությունը:

Այսպես՝ «Վեոլիա Ջուր» ընկերության Գնումների կազմակերպան կարգը նախատեսում է, որ մրցույթի գնահատող հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում Պատվիրատու ստորաբաժանման պահանջով կարող է մրցույթի մասնակիցներին ծանուցել գնման առարկայի նմուշները ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Արդյունքում՝ Պատասխանատու ստորաբաժանումը 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի եզրակացություն:

Միևնույն ժամանակ, վերոնշյալ կարգի համաձայն՝ մրցույթի գնահատող հանձնաժողովը պատվիրատու ստորաբաժնման դրական եզրակացության հիման վրա կայացնում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու և նրան պայմանագիր կնքելու առաջարկ անելու մասին որոշում:

Տվյալ դեպքում, «Վեոլիա Ջուր» ընկերության համապատասխան ստորաբաժանման կողմից ուսումնասիրվել են «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված կնիքների նմուշները, ինչի արդյունքում ներկայացվել է համապատասխան եզրակացություն «Վալարմ» ընկերության կողմից ներկայացված կնիքների նմուշների՝ մրցույթի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ: Այսինքն՝ «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից գնման

ընթացակարգի շրջանակներում չեն սահմանվել խտրական կամ անհավասար պայմաններ, որոնք կարող էին հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը:

Բացի այդ, սույն գործի շրջանակներում առկա փաստերի համադրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ «ՎՋ-ՄԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա պահանջների սահմանումը բխում է ապրանքի առաջնային որակական պայմանների հստակ բնութագրելու անհրաժեշտությունից, քանի որ նշված պահանջը էական է և պայմանավորված է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ջրի ծախսերի ճշգրիտ արձանագրման, ըստ այդմ նաև գանձման ենթակա գումարների ճշգրիտ հաշվարկման հետ:

Ընդ որում, «Վեոլիա Ջուր» ընկերությունը «Գնումների մասին» օրենքի իմաստով հանդիսանում է հանրային կազմակերպություն, ուստի վերջինիս կողմից իրականացվող գնումները կարող են բողոքարկվել «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով: Մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտները կարող են բողոք ներկայացնել պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում առկա պայմանների վերաբերյալ, որպիսի հնարավորություն «Վալարմ» ընկերությունը փաստացի ունեցել է:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը արձանագրում է, որ Հաղորդմամբ նկարագրված «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից դրսևորված վարքագիծը նվազ կարևորության է: Տվյալ դեպքում, «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից կատարված գնման արժեքը, ինչպես նաև ձեռքբերված ապրանքների ծավալները չեն կարող էական ազդեցություն ունենալ մրցակցային միջավայրի վրա:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե բացակայում է խախտման դեպքը:

Ողջ շարադրվածի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ գերիշխող դիրքի չարաշահման առերևույթ հատկանիշներ «Վեոլիա Ջուր» ընկերության գործողություններում առկա չեն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժել:

4. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. Մերժել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հոկտեմբերի 18
Երևան